VEOLIA
Ջուր

ՄԱՅԻՍ 2024

ԱՄՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ» ՓԲԸ

Երևան 2024

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Շահագործման տարածաշրջանի տնօրինություններ 3
1.1. Ջրամատակարարման համակարգի կառավարում 3
1.2. Ջրաչափերի փոխարինում և տեղադրում 9
1.3. Ջրահեռացման համակարգ 10
1.4 Կեղտաջրերի մաքրում և հեռացում 11
1.5 Էներգահամակարգ 11

2. Առևտրային տնօրինություն 12
2.1. Բաժանորդների տվյալներ 12
2.2. Հասույթ 13
2.3. Գանձում 14
2.4. Դեբիտորական պարտքեր /Իրավաբանական վարչություն/ 14
2.5. Ջրաչափեր 15
2.6. Ապօրինի միացումների հայտնաբերում և վերացում 16

3. Տեխնիկական տնօրինություն 17
3.1. Ջրամատակարարման շարունակականություն 17
3.2. Էլեկտրաէներգիայի կառավարում 18
3.3. Աշխարհագրական տեղեկատվական համակարգ 20
3.4. Ջրատար համակարգի բարելավում 21
3.5. Քլորի և խմելու ջրի մաքրման կայանների ծառայություն 21
3.6. 1-85 թեժ գիծ 22

4. Լրատվական ծառայություն 23

5. Որակի, առողջության և անվտանգության բաժին 25
5.1. Դասընթացներ/սեմինարներ 25
5.2. Ռիսկերի հայտնաբերում/մեղմացնող միջոցառումների կիրառում 27
5.3 Վեոլիա Գրուպի ԲՌԿ ստանդարտների ինքնագնահատման, ընկերության համակարգում ներդրման, նոր ԲՌԿ ստանդարտների հայերեն լեզվով թարգմանության և ադապտացման աշխատանքներ 28
5.4. ԱՊՄ-ների և ԿՄՊ-ների ձեռքբերման և բաշխման աշխատանքներ 28

ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1 ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Հաշվետու ժամանակահատվածում Վեռլիա Ընկերության սպասարկման տարածքում իրականացվել են վթարա-որոնողական և ջրագծերի և կոյուղագծերի վերակառուցման, ջրակորուստների հայտնաբերմանն ու վերացմանն ուղղված աշխատանքներ, մասնավորապես

Գյուղ Աշոցք

Աշոցք ՇՏ-ի հետ համատեղ ուսումնասիրվեց Աշոցքի ԳԳՄ-ի գրասենյակի տարածքը, որտեղ արձանագրվել էր խոշոր վթար Դաղձուտներ-Աշոցք D-300մմ ջրատարի վրա: Ջրատարը անցնում է բազմաբնակարան շենքի տակով: Կատարված ուսումնասիրությունների արդյունքում պարզ դարձավ, որ վթարի ստույգ վայրը հենց շենքի շքամուտքի տակ է, շենքի հիմքից ներքև Q-6լ/վ: Փորման աշխատանքների անհնարին լինելու պատճառով որոշվեց ջրագիծը շրջանցել, կառուցելով նոր D-315ՊԷ L-125 մ ջրագիծ:



Քաղաք Գյումրի

Շիրակ ՇՏ-ի հետ համատեղ ուսումնասիրություն կատարվեց Գյումրի քաղաքի Կ. Դեմիրճյան 6-րդ նրբանցքում, որտեղ սուբվենցիոն ծրագրով կատարվում է փողոցի բարեկարգման-ասֆալտապատման աշխատանքներ: Փողոցի հին ջրամատակարարման D-100մմ թուջե ջրագծի մեջ առկա էր ջուր, որի սնուցման աղբյուրը բնակիչների կողմից նոր և հին ջրագծերի սխալ փոխկապակցման արդյունք էր: Վթարաորոնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվեց տվյալ ջրագիծը և կանխվեց ջրի հետագա արտահոսքը:



Գյուղ Կապս

Գոտիավորման բաժնի աշխատակիցների կողմից Ղազանչի 2 ջրատարի վրա իրականացրած ուսումնասիրությունների արդյունքում պարզ դարձավ, որ Կապս և Ջրաձոր բնակավայրերի միջակայքում՝ D-600մմ ջրատարի վրա առկա է շուրջ Q=20-25 լ/վ ջրակորուստ: Որոնողական աշխատանքների շնորհիվ վթարը հայտնաբերվեց Գյումրի-Ամասիա հանրապետական նշանակության ավտոճանապարհի տակ: Իրականացված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվեց վթարի ստույգ վայրը: Վթարը վերացնելու արդյունքում տնտեսվեց Q = 22 լ/վ ջրաքանակ:





Քաղաք Սպիտակ

Սպիտակ ՇՏ աշխատակիցների հետ համատեղ իրականացված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում Սպիտակ քաղաքի Թումանյան թաղամասում հայտնաբերվեցին մի շարք վթարներ՝ այդ թվում նաև գաղտնի: Արդյունքում շահագործումից հանվեցին քայքայված, շահագործման համար ոչ պիտանի Dn=90մմ, L=450մ պէ, Dn=150մմ, L=250մ և Dn=25մմ, L=450մ երկարությամբ պողպատե ջրագծեր: Արդյունքում տնտեսվեց Q = 3լ/վ ջրաքանակ:

Քաղաք Մասիս

Մասիս քաղաքի աշխատակիցների հետ համատեղ իրականացված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում թիվ 4 մանկապարտեզի հարևանությամբ հայտնաբերվեց կապ նոր D=110մմ ՊԷ ջրագծից դեպի հին, չշահագործվող D=150մմ պողպատե ջրագծի մեջ: Խցափակումից հետո տնտեսվեց Q=3լ/վ ջրաքանակ:

Քաղաք Դիլիջան

Դիլիջան տեղամասի աշխատակիցների հետ համատեղ իրականացված վթարարոնոողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվեց վթար Շամախյան 300 ՕԿՋ-ի գոտում՝ Հովհաննես Թումանյան փողոցով անցնող D=110ՊԷ ջրագծի վրա: Վթարը վերացնելուց հետո տնտեսվեց Q=3 լ/վ ջրաքանակ:

Քաղաք Իջևան

Իջևան տեղամասի աշխատակիցների հետ համատեղ իրականացված վթարարոնոողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվեց վթար Ասլանյան 118 տան հարևանությամբ անցնող D=110մմ ՊԷ ջրագծի վրա: Վթարը վերացնելուց հետո տնտեսվեց Q=10 լ/վ ջրաքանակ:

Քաղաք Երևան

Արաբկիր տեղամասի աշխատակիցների հետ համատեղ իրականացված վթարարոնոողական աշխատանքների արդյունքում Եղվարդ քաղաքի Երևանյան փողոցում հայտնաբերվեց թվով 4 վթար D=150մմ պողպատե ջրագծի վրա: Վթարները վերացնելուց հետո տնտեսվեց Q= 3լ/վ ջրաքանակ:







Արաբկիր տեղամասի աշխատակիցների հետ համատեղ իրականացված վթարարոնոողական աշխատանքների արդյունքում Սարյան 18 հասցեի հարևանությամբ, Սարյան 24 հասցեի պոմպակայանի ելքի մոտ հայտնաբերվեց վթար՝ D=150մմ պողպատե ջրագծի վրա: Վթարը վերացնելուց հետո տնտեսվեց Q= 2լ/վ ջրաքանակ և էլեկտրաէներգիա:



Կենտրոն տեղամասի հետ իրականացված վթարարոնոողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվեց գաղտնի վթար Արշակունյաց պողոտա՝ Կոմիտասի անվան այգու հարևանությամբ անցնող D = 100մմ պողպատե ջրագծի վրա: Վթարը վերացնելուց հետո տնտեսվեց Q = 8լ/վ ջրաքանակ:

Շենգավիթ տեղամասի հետ իրականացված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվեց գաղտնի վթար Շարուրի փողոցով անցնող D=80մմ պողպատե ջրագծի վրա: Վթարը վերացնելուց հետո տնտեսվեց Q=3լ/վ ջրաքանակ:

Շահումյան տեղամասի հետ իրականացված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվեց գաղտնի վթար Զորավար Անդրանիկի փողոցով անցնող D = 500մմ պողպատե ջրագծի վրա: Վթարը վերացնելուց հետո տնտեսվեց Q = 10լ/վ ջրաքանակ:

Էրեբունի տեղամասի հետ իրականացված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվեց թվով 3 վթար Խարբերդ 20-րդ փողոցով անցնող D = 75մմ ՊԷ ջրագծի վրա: Վթարը վերացնելուց հետո տնտեսվեց Q = 5լ/վ ջրաքանակ:





Մաշտոց տեղամասի աշխատակիցների հետ համատեղ իրականացված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում Անաստաս Միկոյան 103/16 հասցեում, դիտահորի մեջ հայտնաբերվեց վթարված D=20մմ պողպատե ջրագիծ: Վթարը վերացնելուց հետո տնտեսվեց Q = 3լ/վ ջրաքանակ:

«Հարավ» տեղամասի սպասարկման տարածքում գտնվող Նիզամի փողոց 13 և 14 շենքերի ջրամատակարարումը իրականացվում էր d=80մմ պողպատե քայքայված խողովակներով, հաճախակի էին կրկնվող վթարները:

Տեղամասի աշխատակիցների կողմից քայքայված պողպատե ջրագիծը փոխարինվել է d=50-75մմ L=32գծ/մ պոլիէթիլենային խողովակներով, որի արդյունքում վերոնշյալ շենքերի ջրամատակարարումն իրականացվում է անխափան:



Գեղարքունիքի մարզ

«Սևան» տեղամասի աշխատակիցների կողմից ք.Սևան, Սայաթ-Նովա փողոց 12 հասցեում՝ մանկական զբոսայգու հարևանությամբ, շահագործումից հանվել է d=250մմ L=42գծմ թուջե խողովակը և d=75մմ L=42գծմ պէթ խողովակի ներսրսկման միջոցով իրականացվել են մոնտաժման աշխատանքներ:

«Գավառ» տեղամասի աշխատակիցների կողմից «Վեոլիա Ջուր» ՓԲԸ ՊԿԱԾ 2024թ. սեփական ուժերով ծրագրի շրջանակներում Գավառ քաղաքի Բոշնաղյան փողոցում շահագործումից հանվել են d=50-150մմ L=350գծմ քայքայված, կոռոզիայի ենթարկված մետաղական ջրագծերը և վերակառուցվել են d=20-63-110մմ L=365գծմ պէթ ջրագծեր, տեղադրվել է թվով 2 ջրաչափական դիտահոր, թվով 3 բաժանորդի ջրաչափերը փոխարինվել և վերատեղադրվել են սահմանազատման կետերում, տեղադրվել է թվով 3 d=15մմ և թվով 1 d=20մմ փական:
Կատարված աշխատանքների արդյունքում Բոշնաղյան փողոցում բարելավվել է մատակարարվող խմելու ջրի որակը, ապահովվել է սպասարկվող բաժանորդների ջրամատակարարումը, տնտեսվել է մոտ 3լ/վ ջրաքանակ, կատարվել է ցանցի աշխատանքի ճիշտ կազմակերպում:

Արարատի մարզ

«Գավառ» տեղամասի աշխատակիցների կողմից «Վեոլիա Ջուր» ՓԲԸ ՊԿԱԾ 2024թ. սեփական ուժերով ծրագրի շրջանակներում Գավառ քաղաքի «Արտաշատ» տեղամասի աշխատակիցների կողմից Արտաշատ համայնքի Նշավան բնակավայրի Շիրազի փողոցում վերակառուցվել են d=20-110մմ, L=820գծմ ՊԷԹ ջրագծեր: Նշված փողոցի պէթ d=90մմ գործող ջրագծերը կառուցվել են 2000-ական թվականներին՝ անորակ, ստանդարտին չհամապատասխանող խողովակներով և գտնվում էին խիստ վթարային, քայքայված վիճակում և պիտանի չէին հետագա շահագործման համար, իսկ հաճախակի առաջացող վթարները բերում էին ջրի պղտորվածության: Շահագործումից հանվել են d=20-90մմ, L=820գծմ վթարային վիճակում գտնվող ջրագծեր, տեղադրվել է թվով 20 ջրաչափական դիտահոր, թվով 10 ջրաչափ (d=15մմ), վերատեղադրվել՝ թվով 10-ը, թվով 32 հետադարձ փական, թվով 2 ե/բ դիտահոր ծածկերով: Կատարված աշխատանքների արդյունքում Նշավան բնակավայրում բարելավվել է մատակարարվող խմելու ջրի որակը, տնտեսվել է մոտ 3 լ/վրկ ջրաքանակ, կատարվել ցանցի աշխատանքների ճիշտ կազմակերպում:

Արագածոտնի մարզ

«Աշտարակ» տեղամասի աշխատակիցների կողմից «Վեոլիա Ջուր» ՓԲԸ ՊԿԱԾ 2024թ.սեփական ուժերով ծրագրի շրջանակներում Արագածոտնի մարզի Պռոշյան, Ն.Աշտարակեցու, Դոդոխյան, Թորոմոնյան, Աբովյան, Գ.Էմին փողոցներում վերակառուցվել են L=4150 գծմ ջրագծեր: Նշված փողոցների ջրագծերը կառուցվել էին դեռ 1960-1970-ական թվականներին՝ ստանդարտին չհամապատասխանող խողովակներով, որոնք գտնվում էին խիստ քայքայված, կոռոզիայի ենթարկված վիճակում և պիտանի չէին հետագա շահագործման համար, իսկ հաճախակի առաջացող վթարները բերում էին ջրի պղտորվածության և որակի անկման:
Կատարված աշխատանքների արդյունքում վերակառուցվել են d=20-250մմ L=4150 գծմ պէթ ջրագծեր, շահագործումից հանվել են d=50-325մմ L=7000գծմ վթարային վիճակում գտնվող մետաղական ջրագծերը, տեղադրվել է թվով 43 ջրաչափական դիտահոր, թվով 2 ե/բ դիտահորի ծածկ՝ թուջե մտոցով, թվով 9 փականային հոր՝ բազմաբնակարան շենքերի մուտքագծերին: Կատարված աշխատանքների արդյունքում Արագածոտնի մարզի Պռոշյան, Ն.Աշտարակեցու, Դոդոխյան, Թորոմոնյան, Աբովյան, Գ.Էմին փողոցներում բարելավվել է մատակարարվող խմելու ջրի որակը, ապահովվել է սպասարկվող բաժանորդների անխափան ջրամատակարարում, տնտեսվել է մոտ 10-12լ/վրկ ջրաքանակ, կատարվել է ցանցի աշխատանքների ճիշտ կազմակերպում:

Սյունիքի մարզ

«Կապան» տեղամաս. ՊԿԱԾ 2024թ. սեփական ուժերով ծրագրի շրջանակներում Կապան քաղաքի Մ.Պապյան փողոցի 2, 2ա, 8, 10, 13, 15 16, 17,18, 19, 20, Հ.Ավետիսյան փողոցի 2, 4, 6, 16, 18, 20, 22, 24, Սպանդարյան փողոցի 2ա, 6, 7 բազմաբնակարանային շենքերի հասցեներում իրականացվել են հիմնանորոգման

աշխատանքներ: ք. Կապան, Հ.Ավետիսյան և Մ.Պապյան փողոցներում վերակառուցվել է d=32-110մմ L=1251գծմ ջրագիծ, իսկ ք. Կապան, Սպանդարյան փողոցում՝ d=40-63մմ L=350գծմ ջրագիծ: Շահագործումից հանվել են d=200մմ L=850գծմ վթարային վիճակում գտնվող մետաղական ջրագծեր:
Կատարված աշխատանքների արդյունքում բարելավվել է մատակարարվող խմելու ջրի որակը, ապահովված է բաժանորդների անխափան ջրամատակարարումը, վերացվել են ջրակորուստները, տնտեսվել է մոտ 10-12լ/վրկ ջրաքանակ, ճնշումները նվազել են, կատարվել է ցանցի աշխատանքների ճիշտ կազմակերպում, հասույթի աճ, ինչպես նաև կարգավորվել է կոյուղու համակարգի նորմալ աշխատանքը:

Նշենք նաև, որ ծրագրի շրջանակներում իրականացվող աշխատանքներին զուգահեռ աշխատակիցների կողմից շարունակվել են պոմպակայանի ջրագծի վերակառուցման աշխատանքները՝ ք. Կապան, Բաղաբերդ 28 հասցեում վերակառուցվել է d=133մմ L=270գծմ մետաղական ջրագիծ, ինչպես նաև՝ 2024 թվականի տարեսկզբին, փոխարինվել է ք.Կապան, Բաղաբերդ թաղամասի 1-5 բազմաբնակարանային շենքերի ջրագծերը (d=40-110մմ, L=339գծմ):

Ջրահեռացման համակարգ

Արմավիրի մարզ

■ «Էջմիածին» ենթատեղամաս. ք.Էջմիածին, Սբ. Մ. Մաշտոց փողոցի 10 և 12 շենքերի բակերի տարածքում d=200մմ գործող կերամիկե և ազբեստե կոյուղագծերը կառուցված էին դեռևս 1960-1970ական թվականներին, որոնք գտնվում էին խիստ քայքայված, կոռոզիայի ենթարկված վիճակում և պիտանի չէին հետագա շահագործման համար, հաճախակի առաջանում էին խցանումներ, որոնք հանգեցնում են բնակիչ/բաժանորդների արդարացի բողոքներին: Աշխատակիցների կողմից «Վեոլիա Ջուր»ՓԲԸ ՊԿԱԾ-2024 սեփական ուժերով ծրագրի շրջանակներում վերակառուցվել են d=200մմ L=210գծմ պէթ երկշերտ ծալքավոր խողովակով կոյուղագծեր, տեղադրվել է թվով 8 ե/բ դիտահոր 1000*1000մմ և ե/բ դիտահորի ծածկ՝ թուջե մտոցով (d-560) 1200x1200մմ: Շահագործումից հանվել են d=200մմ L=210գծմ վթարային վիճակում գտնվող կերամիկե և ազբեստե կոյուղագծերը: Կատարված աշխատանքների արդյունքում Էջմիածին քաղաքի Սբ. Մ. Մաշտոց փողոցի 10 և 12 շենքերի կոյուղագծերը աշխատում են ամբողջ տրամագծով, վերացել են կոյուղագծի հաճախակի խցանումները և կատարվել է ցանցի աշխատանքների ճիշտ կազմակերպում:

Սյունիքի մարզ

■ «Կապան» տեղամասի աշխատակիցների կողմից Վեոլիա Ջուր» ՓԲԸ ՊԿԱԾ 2024թ. սեփական ուժերով ծրագրի շրջանակներում ք. Կապան, Հ.Ավետիսյան և Մ.Պապյան փողոցներում վերակառուցվել են d=200-300մմ L=180գծմ պէթ երկշերտ ծալքավոր խողովակներ:

Գեղարքունիքի մարզ



■Սևան» տեղամասի աշխատակիցների կողմից կատարվել են Սևան քաղաքի Սևան-Հրազդան d=1000մմ կոյուղու կոլեկտորի դիտահորերի մաքրման և լվացման աշխատանքներ:

Մայիս ամսվա ընթացքում ջրամատակարարման և ջրահեռացման համակարգում կատարված աշխատանքները հակիրճ նկարագրվում են Աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1. Աշխատանքների հակիրճ նկարագիր

Կատարված աշխատանքները	Չափման միավոր	Քանակ
Չափում հոսքաչափով	տեղ	1024
Որոնում խողովակափնտրիչ սարքով	մ	29314
Հոսակորուստի որոնում ակվաֆոնով	մ	20125
Հոսակորուստի որոնում կորելյատորով	մ	2250
Ջրաչափական հանգույնցներ ուսումնասիրություն, սխեմաների կազմում	հատ	0
Շահագործումից հանված ջրագիծ	մ	2687.5
Կառուցված ջրագիծ	մ	14029.6
Կառուցված կոյուղագիծ	մ	709
Վերացված գաղտնի վթարներ	հատ	9
Փոխարինված փական	հատ	303
Տեղափոխված/փոխարինված ջրաչափական հանգույց	հատ	281
Մաքրված դիտահոր	հատ	2108
Գաղտնի վթաների վերացման արդյունքում տնտեսված ջրաքանակ	լ/վ	6
Վերացված վթարներ	**Չափման միավոր**	**Քանակ**
Ջրամատակարարման ցանցում	հատ	1050
Ջրահեռացման ցանցում	հատ	1437
Պոմպակայաններում	հատ	0
Մաքրված անձրևընդունիչ	հատ	0

Մայիս ամսվա ընթացքում վերացված վթարների հակիրճ նկարագիրը ներկայացվում է ստորև բերված Աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2. Վերացված վթարների քանակային նկարագիր

	Պոլիէթիլենային խողովակներ (հատ)	Մետաղական խողովակներ (հատ)	Ցանցում շահագործման և պահպանման աշխատանքներ
Ընդամենը	1167	783	1319

1.2. ՋՐԱՉԱՓԵՐԻ ՓՈԽԱՐԻՆՈՒՄ ԵՎ ՏԵՂԱԴՐՈՒՄ

Ստորև Աղյուսակ 3-ում ներկայացված է մայիս ամսվա ընթացքում տեղադրված, փոխարինված կամ սահմանազատման կետեր տեղափոխված տարբեր տրամաչափերի ջրաչափերի քանակը:

Աղյուսակ 3. Տեղադրված, փոխարինված, տեղափոխված ջրաչափեր

Կատարված աշխատանքներ	Ջրաչափի տրամագիծ, մմ										
	15	20	25	30	32	40	50	65	80	100	Ընդամենը
Տեղադրված	203	4	1	0	0	0	2	0	0	1	211
Փոխարինված	258	5	2	0	4	6	13	0	0	3	291
Տեղափոխված											0
Տեխ. ակտ	273	5	2	0	1	2	2	0	0	0	285
Ընդամենը	734	14	5	0	5	8	17	0	0	4	787

Ընդհանուր առմամբ տեղադրվել, փոխարինվել կամ սահմանազատման կետեր են տեղափոխվել 15-100 մմ տրամաչափի 867 ջրաչափ: Կատարված աշխատանքների 93%-ը վերաբերել է 15 մմ ջրաչափերին:

1.3. ՋՐԱՀԵՌԱՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Մայիս ամսվա ընթացքում ջրահեռացման ցանցում կատարված աշխատանքների հակիրճ նկարագիրը ներկայացվում է ստորև Աղյուսակ 4-ում:

Աղյուսակ 4. Աշխատանքների հակիճ նկարագիր

հ/հ	Տեղամասի անվանումը	Կոյուղագծերի լվացում մ	Կոյուղագծերում առաջացած խցանումների բացում տեղ	Կոյուղագծերի կառուցում կամ վերակառուցում գծ/մ
1	Արաբկիր	3920	312	3
2	Քանաքեռ-Զեյթուն	100	282	6
3	Մաշտոց	270	235	160
4	Շահումյան	0	212	0
5	Շիրակ	1274	524	15.5
6	Արթիկ	0	91	0
7	Ապարան	0	65	0
8	Ալավերդի	2350	30	18
9	Աշոցք	0	5	0
10	Բերդ	470	18	0
11	Իջևան	0	53	0
12	Լոռի	0	234	0
13	Նոյեմբերյան	190	10	18
14	Սպիտակ	0	16	0
15	Ստեփանավան	1605	24	0
16	Թալին	0	12	0
17	Տաշիր	0	7	0
18	Չարենցավան	0	102	3
19	Աբովյան	0	101	66
20	Հրազդան	0	89	78
21	Կենտրոն	140	288	0
22	Հյուսիս	80	297	102
23	Հարավ	0	292	18
24	Էրեբունի	360	188	24
25	Արմավիր	0	141	0
26	Արտաշատ	0	118	0
27	Էջմիածին	0	239	120
28	Աշտարակ	4626	63	40
29	Արարատ	0	67	0
30	Մասիս	0	56	33
31	Գավառ	240	31	0
32	Սևան	220	82	6
33	Մարտունի	0	37	0
34	Վարդենիս	400	8	0
35	Ճամբարակ	67	24	0
36	Դիլիջան	330	64	0
37	Վայք	325	18	0
38	Եղեգնաձոր	110	21	3
39	Ջերմուկ	150	37	0
40	Սիսիան	0	30	0
41	Գորիս	0	45	0
42	Կապան	1225	85	84
43	Մեղրի	490	48	44
	Ընդամենը	18942	4701	841.5

1.4. ԿԵՂՏԱՋՐԵՐԻ ՄԱՔՐՈՒՄ ԵՎ ՀԵՌԱՑՈՒՄ

Ընթացիկ ամսում «Կեղտաջրերի մաքրման կայանների» ծառայության ենթակայության տակ գտնվող կեղտաջրերի մաքրման կայաններում և պոմպակայաններում կատարվել են բազմաթիվ վթարավերականգնողական աշխատանքներ, որոնցից առանձնացվել են հետևյալ աշխատանքները.

- Սևանի N3 կեղտաջրերի պոմպակայանում փսասվել էր d=150 մմ մղման խողովակը, որը գտնվում էր հորի մեջ: Այդ պատճառով հորը դատարկվեց, և խողովակը վերանորոգվեց եռակցման միջոցով: Բացի այդ, խցանվել էր պոմպի բանվորական անիվը, ինչի հետևանքով պոմպի արտադրողականությունը նվազել էր: Պոմպը դուրս բերվեց հորից, մաքրվեց և տեղադրվեց նորից: Այժմ պոմպակայանը գործում է անխափան:
- Մարտունու կեղտաջրերի մաքրման կայանի էլ. ենթակայանի բարձր լարման ապահովիչները շատ հաճախ խափանվում էին, որի պատճառը անձրևաջրերի ներթափանցումն էր: Արդյունքում փոխարինվեցին ներդիրները և սիլիկոնե մածուկով պատվեցին բոլոր բաց մնացած հատվածները: Արդյունքում ենթակայանը աշխատում է անխափան:
- Վարդենիսի կեղտաջրերի մաքրման կայանի օդամուղի ռոտորի ածխե թիթեղները մաշվել էին և այդ պատճառով օդ չէր մղվում դեպի սարքավորումներ: Արդյունքում դրանք փոխարինվեցին նորով և այժմ օդամուղը աշխատում է բնականոն ընթացքով: Կարգաբերվեց նաև մանր ճաղավանդակի քերիչ սանրը, որը աշխատանքի ընթացքում խախտվել էր:
- Գավառի կեղտաջրերի պոմպակայանում խցանվել էր պոմպի բանվորական անիվը, որը դուրս բերվեց հորից մաքրվեց և ետ տեղադրվեց: Արդյունքում պոմպակայանն աշխատում է բնականոն ընթացքով:

Բոլոր ԿՄԿ-ներում և ԿՊ-ներում իրականացվել են պրոֆիլակտիկ աշխատանքներ, ստուգվել են բոլոր սարքերը (թե էլեկտրական, թե մեխանիկական), կատարվել են կարգավորումներ:



Աղյուսակ 5. Աշխատանքների հակիրճ նկարագիր

Հ/հ	Գտնվելու վայրը	Կառույցի անվանումը	Մղված կեղտաջրերի ծավալը մ³	Մաքրված կեղտաջրերի ծավալը մ³	Կեղտաջրից առանձնացած կեղտ տ
1	ք. Գավառ	«Գավառ» ԿՄԿ	0	58,537	28,8
2	ք. Մարտունի	«Մարտունի» ԿՄԿ	0	60,536	39,6
3	ք. Վարդենիս	«Վարդենիս» ԿՄԿ	0	169,718	5,4
4	ք. Ջերմուկ	«Ջերմուկ» ԿՄԿ	0	40,626	10,8
5	ք. Դիլիջան	«Դիլիջան» ԿՄԿ	0	112,878	18
6	ք. Սևան	«Սևանի» N3 պ/կ	21,467	0	0
7	ք. Սևան	«Սևանի» N5 պ/կ	13,072	0	0
8	ք. Գավառ	«Գավառ» պ/կ	9,300	0	0
9	ք. Վարդենիս	«Վարդենիս» պ/կ	10,200	0	0
10	ք. Ջերմուկ	«Ջերմուկ» պ/կ	0	0	0

1.5. ԷՆԵՐԳԱՀԱՄԱԿԱՐԳ

Թվով 431 բակային պոմպակայանում կատարվել են ուսումնասիրություններ, որոնց արդյունքում թվով 419 հասցեում վերացվել են հայտնաբերված թերությունները:

ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆ

2.1. ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐ

Շարունակվում է բաժանորդների հետ պայմանագրերի կնքման գործընթացը: 01.06.2024 թվականի դրությամբ «Ինտերակտիվ» համակարգ է մուտքագրվել 622,129 պայմանագիր. Հաշվառված բաժանորդների քանակական տվյալները հաշվետու ամսվա դրությամբ բերված են ստորև աղյուսակում.

Տնօրինություն	Սպառողներ	2024թ. մայիս ամսին ծառայություններ ստացած բաժանորդների թիվ	Կնքված պայմանագրերի քանակը	%
Առևտրային	Բնակիչ-բաժանորդ	679,035	592,188	87,2
	Իրավաբանական անձ	33,062	29,941	90,6

Հաշվառված բաժանորդների քանակական տվյալները հաշվետու ամսվա դրությամբ բերված են ստորև աղյուսակում.

Տնօրինություն	Սպառողներ	Բաժանորդների ընդհանուր քանակ	Ծախսող բաժանորդների քանակ	%
Առևտրային	Բնակիչ-բաժանորդ	750,786	594,898	79,2
	Իրավաբանական անձ	38,609	28,010	72,5

Սպառում չունեցող (0-ական ծախսեր) բաժանորդների մասով, հնարավորության դեպքում, լրացուցիչ ստուգայցեր են իրականացվում ինչպես տեղամասերի մասնագետ-տեսուչների, այնպես էլ կենտրոնական գրասենյակի համապատասխան աշխատակիցների կողմից: Միաժամանակ համեմատական վերլուծություններ են կատարվում այլ ծառայություններ մատուցող ընկերությունների տվյալների հետ:
Առևտրային տեղամասերի սպասարկման տարածքում հաշվետու ամսում համապատասխան փաստաթղթերի հիման վրա ձևակերպվել և տվյալների բազա է մուտքագրվել թվով 806 նոր բաժանորդ:

2.2. ՀԱՍՈՒՅԹ

Շարունակվում է ջրաչափերի փոխարինման գործընթացը: Պիլոտային ծրագրերին (Շիրակ, Լոռի, Սևան և այլն) զուգահեռ փոխարինվում են նաև այլ տարածքներում անսարք ջրաչափերը: Նախկին ցածրորակ ջրաչափերը փոխարինվում են նոր՝ բարձրակագ և ավելի զգայուն ջրաչափերով: Խոշոր սպառում ունեցող իրավաբանական բաժանորդների ջրաչափերը հնարավորության դեպքում միացվում են Լոկատոր համակարգին՝ ծախսերը պարբերաբար, առանց այցելության, առցանց հսկելու նպատակով:
Իրավաբանական անձերի ջրաչափերը փոխարինվում և տեղափոխվում են բաժանորդների տարածքներից դուրս գտնվող հատուկ դիտահորեր, որը նվազեցնում կամ գրեթե բացառում է ապօրինությունների հնարավորությունը: Գրեթե ամբողջովին փոխարինվել և բաժանորդների տարածքներից դուրս են տեղափոխվել գործող բուժ. հաստատությունների, զին. մասերի, դպրոցների և մանկապարտեզների ջրաչափերը:
Փոխարինված ջրաչափերն ուղարկվում են պարտադիր լաբորատոր ստուգաչափման: Մայիս ամսվա ընթացքում ստուգաչափվել է 5797 ջրաչափ:

Տնօրինություն	Սպառողներ	Սարքին	Անսարք	Միջամտած	Ստուգաչափված ջրաչափերի քանակ առ 05.2024
Առևտրային	Բնակիչ-բաժանորդ	3203	1821	551	5575
	Իրավաբանական անձ	106	91	25	222
	Ընդամենը	3309	1912	576	5797

Ստուգաչափված ջրաչափ



Փոխարինված ջրաչափերի լաբորատոր ստուգաչափման արդյունքների վերլուծությունը ցույց է տալիս, որ առկա ջրաչափերի որոշ մասն ունի խնդիրներ: Օրինակ՝ մայիս ամսին փոխարինված 5797 ջրաչափերի մոտ 43 %-ը (կամ 2488 ջրաչափ) անսարք է կամ առկա է արտաքին միջամտություն:
Միջամտած ջրաչափերի մասով կազմվում են համապատասխան արձանագրություններ:
Ընթացիկ ամսում լաբորատոր ստուգաչափման արդյունքում, անսարք և միջամտած ջրաչափերից կազմված արձանագրությունների հիման վրա վերահաշվարկվել է 365,975 մ3 հասույթ:
Ստորև՝ գրաֆիկային տեսքով, բերված են 2024թ. բաժանորդների ամսական սպառման ծավալները նախորդ տարվա նույն ժամանակահատվածի հետ համեմատ.

Հասույթ



2.3 ԳԱՆՁՈՒՄ

Մայիս ամսին նախորդ ամսվա ձևավորված հասույթի համեմատ գանձումը կազմել է 2,667 մլն. դրամ (103 %):
Նախորդ ամսվա ձևավորված հասույթի դիմաց վճարումները սահմանված ժամկետում ապահովելու նպատակով ընկերությունում կիրառվում են բաժանորդներին ուղարկվող հիշեցումների և ծանուցումների մի շարք մեթոդներ՝ էլեկտրոնային հաղորդագրություն, գրավոր՝ փոստային առաքում, ծանուցումներ, հեռախոսազանգեր և այլն:
Պարբերաբար չվճարող բաժանորդներին «վճարման դաշտ» բերելու նպատակով՝ հնարավորության դեպքում իրականացվում են պայմանագրով և գործող կարգով նախատեսված անհատական ջրամատակարարման դադարեցումներ՝ մինչև պարտքի մարումը կամ պարտքի մարման ժամանակացույցի կնքումը, սակայն, հաշվի առնելով որոշակի հանգամանքներ, հատկապես սահմանամերձ բնակավայրերում, հաշվետու ամսվա ընթացքում մեր կողմից չեն իրականացվել նաև պայմանագրով և գործող կարգով նախատեսված՝ անհատական ջրամատակարարման դադարեցումներ:
Այս իրավիճակը, բնականաբար, իր բացասական ազդեցությունն է ունեցել գանձման բարձր, նախատեսված ցուցանիշների ապահովման գործում:

2.4 ԴԵԲԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐ / ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ/

Համեմատաբար մեծ դեբիտորական պարտքերի գանձման նպատակով Առևտրային տնօրինության աշխատակիցների կողմից շարունակվում է պարտքերի մարման ժամանակացույցերի կնքման գործընթացը:
Մայիս ամսվա ընթացքում Առևտրային տնօրինության կողմից կնքվել է թվով 199 պարտքի մարման ժամանակացույց՝ մոտ 25.2 մլն դրամ ընդհանուր գումարով:
Ժամկետանց խոշոր դեբիտորական պարտք ունեցող բաժանորդների պարտքերի գանձմանն իրավական ընթացք տալու համար, առաջնահերթ նոր պայմանագրեր են կնքվում այդ բաժանորդների հետ, ճշգրտվում է դեբիտորական պարտքերի չափը, և պարտատերերի ցուցակները ներկայացվում են իրավաբանական վարչություն:

Ստորև աղյուսակով ներկայացվում են դեբիտորական պարտքերի և հայտնաբերված խախտումների վերաբերյալ արձանագրություններով դատարան ներկայացված գործերը:

Դատարան ներկայացված գործերի քանակը շարունակական		Բավարարված		Մերժված		2017-2024թթ. ընթացիկ որոշեր		ԴԱՀԿ ներկայացված գործեր	
քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար
32,740	4,454,733,938	19,987	2,315,272,863	1,032	245,822,222	12,654	2,139,461,075	12,261	1,451,827,727

Ինչպես ցույց է տալիս աղյուսակը՝ դատարան ներկայացրած գործերի ընդհանուր քանակի 61 %-ն արդեն բավարարված է և ընդամենը 3 %-ը՝ մերժված:

Դեբիտորական պարտքերի վերաբերյալ տվյալները բերված են ստորև ներկայացված աղյուսակում.

Տնօրինություն	Պարտքը 01.06.2024թ. դրությամբ (մլն. ՀՀ դրամ)	Այդ թվում հուլիս ամսվա հասույթ (մլն. ՀՀ դրամ)
Առևտրային, այդ թվում	11,524	2,590
Բնակիչ-բաժանորդներ	8,121	1,777
Իրավաբանական անձեր	3,403	813

Հարկ է նշել, որ մարզերի տարածաշրջանի բաժանորդների առկա պարտքերը դեռ հստակեցված չեն և առայժմ հանված չեն այլ ընկերություններ փոխանցված վճարումները, ինչպես նաև հաշվի չեն առնված բաժանորդների՝ նախկինում ունեցած կանխավճարները: Նշված հանգամանքը բավականին դժվարեցնում է բաժանորդների հետ դեբիտորական պարտքերի ճշգրտման ու գումարների հավաքագրման գործընթացը, ինչպես նաև դատական գործընթացի արդյունավետ կազմակերպումը:

Շուրջ 416.4 մլն. ՀՀ դրամը կուտակվել է երկու բաժանորդներին մատուցված ջրամատակարարման ծառայությունների դիմաց մեծածախ սակագնով պարբերաբար չվճարելու պատճառով: Դրանք են՝ «Հաճն Ջուր» ՀՈԱԿ-ը և «ՀՀ Արարատի մարզի Ազատաշեն» համայնքը:

2024 թ.դեբիտորական պարտքերի շարժը / մլն.դրամ (Մարզեր)



2.5 ՋՐԱՉԱՓԵՐ

Բաժանորդների տվյալների բազայում 01.06.2024թ. դրությամբ հաշվառված ջրաչափով և առանց ջրաչափի (նորմատիվային եղանակով հաշվարկվող) բաժանորդների քանակական տվյալները բերված են ստորև աղյուսակում.

Տնօրինություն	Սպառողներ	Բնակիչ-բաժանորդներ			Իրավաբանական		
		Ընդամենը	Այդ թվում ծախսող	%	Ընդամենը	Այդ թվում ծախսող	%
Առևտրային	Ջրաչափով	722,027	593,929	82.26	37,575	28,001	74.52
	Առանց ջրաչափի	28,881	986	3.41	1,036	10	0.97

Տվյալների բազայում 01.06.2024թ. դրությամբ պիտանելիության ժամկետը (12 տարին) գերազանցող ջրաչափերի քանակական տվյալները ներկայացված են աղյուսակային տեսքով.

Տնօրինություն	Բնակիչ-բաժանորդներ			Իրավաբանական		
	Գործող ջրաչափերի քանակը	Այդ թվում՝ ժամկետանց	%	Գործող ջրաչափերի քանակը	Այդ թվում՝ ժամկետանց	%
Առևտրային	893,197	380,520	42.60	40,923	6,569	16.05

Առաջնահերթությամբ՝ խափանված, հետո պիտանելիության ժամկետը գերազանցող ջրաչափերի տվյալները ներկայացվում են համապատասխան ստորաբաժանումներին՝ դրանց փոխարինման նպատակով:
Հաշվետու ամսվա ընթացքում տեղադրվել և փոխարինվել է (այդ թվում թաղամասային ծրագրով) 6876 ջրաչափական սարք: Այդ թվում՝ նախկինում ջրաչափական սարք չունեցող բաժանորդների մոտ տեղադրվել է 871 նոր ջրաչափ և այդ բաժանորդներին մատուցված ծառայությունների հաշվարկն այսուհետ կատարվում է նոր տեղադրված ջրաչափերի ցուցմունքների հիման վրա:
Երևանի թաղամասային ծրագրի շրջանակներում կապալառու ընկերությունների կողմից իրականացվում են գոյություն ունեցող ջրաչափերի փոխարինման աշխատանքներ ավելի բարձր դասի ջրաչափերով, ինչն էլ նպաստում է բաժանորդների միջին ծախսի ճշգրիտ հաշվառմանը:

ՊԿԱԾ տեղադրված ջրաչափեր

Հասցե	Ջրաչափերի ընդհանուր քանակ	Տեղադրված ջրաչափերի քանակ	%
գ.Քասախ	2484	2045	81.9
գ.Պռոշյան	1719	1129	66.5
ք.Հրազդան, Միկրոշրջան թաղ.	6029	1972	32.4

Տեղամասերում ընկերության տնօրինությունների ուժերով իրականացվում է բաժանորդների ջրաչափերի փոխարինման թաղամասային ծրագիր:
Ջրաչափերի փոխարինման աշխատանքներ են իրականացվել մի շարք տեղամասերի սպասարկման տարածքներում: Առկա անսարք և փոխարինման ենթակա ջրաչափերից արդեն փոխարինվել է՝ Լոռի տեղամասի սպասարկման տարածքի տարբեր հասցեներում՝ 20089, Շիրակ տեղամասի սպասարկման տարածքում՝ 18206, Գորիս տեղամասի սպասարկման տարածքում՝ 5004, Կապան տեղամասի սպասարկման տարածքում՝ 5769, Սիսիան տեղամասի սպասարկման տարածքում՝ 2888, Արարատ տեղամասի սպասարկման տարածքում՝ 5167 և Արտաշատ տեղամասի սպասարկման տարածքում՝ 8415 ջրաչափական սարք:

2.6 ԱՊՕՐԻՆԻ ՄԻԱՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՅՏՆԱԲԵՐՈՒՄ ԵՎ ՎԵՐԱՑՈՒՄ

Առևտրային տնօրինության տեղամասերի աշխատակիցների ամենօրյա աշխատանքի մաս են կազմում ապօրինի միացումների հայտնաբերման, արձանագրման և ապօրինությունների վերացման ուղղությամբ աշխատանքները: Կազմված արձանագրություններն «Ինտերակտիվ» համակարգ մուտքագրելուց հետո, ապօրինություն կատարած անձիք սահմանված կարգով ծանուցվում են, նրանց են ներկայացվում վերահաշվարկվող, վճարման ենթակա գումարների չափերը, իսկ տվյալ հասցեները փոխանցվում են տարածաշրջանի շահագործման տնօրինությանը՝ ջրազրկում իրականացնելու նպատակով:
Հաշվետու ժամանակահատվածում հայտնաբերված ապօրինի միացումների վերաբերյալ կազմված արձանագրությունների հիման վրա վերահաշվարկված ջրածախսերի տեղեկատվությունը բերված է ստորև ներկայացված աղյուսակում:

Տնօրինություն	Քանակ	Խ.մ.	Գումար (ՀՀ դրամ)
Առևտրային	563	235,696	42,826,615

Ապօրինությունների հայտնաբերման և արձանագրությունների կազմման գործառույթը, տեղամասերի առևտրային ծառայության աշխատակիցներից բացի, իրականացվում է նաև Գլխավոր տնօրինության առևտրային վերահսկողության աշխատակիցների կողմից:

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆ

3.1. ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ստորև ներկայացված գրաֆիկում պատկերված են Երևան քաղաքի մայիս ամսվա շարունակականության տվյալները, որը կազմում է 94.9%, ինչը 1.8%-ով ցածր է նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի ցուցանիշների համեմատ:
Շարունակում է գործել ընկերության կողմից սպասարկվող բնակավայրերի ջրամատակարարման գրաֆիկը, որը համաձայնեցվել է Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի հետ:

Ջրամատակարարման շարունակականություն Երևան



	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր
0	1											
2022	96.4%	96.5%	97.1%	97.1%	97.0%	96.8%	96.6%	96.9%	97.1%	96.8%	96.7%	96.5%
2023	96.6%	96.5%	96.8%	96.8%	96.7%	96.6%	96.3%	96.3%	96.6%	96.8%	96.7%	96.5%
2024	96.4%	96.3%	96.3%	96.2%	94.9%							

Հաշվետու ամսվա ընթացքում «Շարունակականության և մոնիթորինգի բաժնի» կողմից ՇՏ-ներում կարգաբերվել են թվով 53 ՃԿՓ-ներ:
Ստորև ներկայացված են կարգաբերված ՃԿՓ-ների գրաֆիկներից մի քանիսը՝







Երևան քաղաքը սնող Գառնի, Ապարան, Արզնի 1, Արզական, Գյումուշ 1,2 և Կաթնաղբյուրի ջրատարների ինքնահոս ջրաքանակը 2024թ-ի մայիս ամսին 2023թ-ի նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է 101լ/վ-ով, իսկ Երևան քաղաքի ջրարտադրության համար էլ. էներգիայի ծախսը նվազել է 391 հազար կՎտ-ով, ինչը երևում է ստորև ներկայացված գրաֆիկում:



3.2. ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Հաշվետու ամսվա ընթացքում էլ. էներգիայի ծախսը Երևան քաղաքում ավելացել է 5569 կՎտ/ժ (1,24%), այն դեպքում երբ նորակառույց շենքերի 13 պոմպակայան ավելացել է «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի հաշվեկշռում՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշների համեմատ: Այդ 13 պոմպակայանների էլ. էներգիայի ծախսը միայն կազմում է 4748 կՎտ/ժ, իսկ առանց այդ պոմպակայանների էլ. էներգիայի ծախսը՝ կավելանար 821 կՎտ/ժ:

Երևան քաղաքի բակային պոմպեր (առանց Խարբերդի պոմպակայանի)



Երևան քաղաքի բակային պոմպեր

Հաշվետու ժամանակահատվածում գույքագրվել է 164 էլ. հաշվիչ: Ջնջվել է 2 նոր ընդունվող պոմպակայան: Ամենօրյա կարգով ընթերցվել և հաշվետվություն է ներկայացվել ջրարտադրության խոշոր պոմպակայանների էլ. էներգիայի ծախսի վերաբերյալ:

Էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի ԿՈՒՊ (կարգավորվող ուղիղ բաղադրիչում) կատարվել է առևտրային գործընթաց, որի արդյունքում տնտեսվել է 5,218,276 ՀՀ դրամ (առանձ ԱԱՀ): Կատարվել է էլ. էներգիայի հաշվառում, գործարքների արդյունքում ձևավորված ակտերի ստուգում, հաստատում:

Պոմպակայանների ուսումնասիրություն

Թվով 40 խոշոր պոմպակայանում կատարվել են ուսումնասիրություններ, որոնց արդյունքում 36 պոմպակայանում վերացվել են հայտնաբերված թերությունները:

Թվով 431 բակային պոմպակայանում կատարվել են ուսումնասիրություններ, որոնց արդյունքում թվով 419 հասցեում վերացվել են հայտնաբերված թերությունները:

Ինվերտորների տեղադրում

- Հաշվետու ամսում երկու հասցեում տեղադրվել է ինվերտորային համակարգ.
- Քոչարի 13 (Ar-52)
- Բագրատունյաց 35 (She-113)

Ինվերտորային պոմպի տեղադրում

- Հաշվետու ամսում չորս հասցեում տեղադրվել է ինվերտորային պոմպ.
- Փափազյան 11շ. (Ar-60)
- Նարեկացի 39 (Hy-24)
- Արտաշիսյան 45/20 (She-12)
- Արտաշիսյան 54 (She-130)

Տեղադրված ընդհանուր 142 ինվերտորային համակարգով պոմպերի սպառած էլ. էներգիան, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ նվազել է 106124 կՎտ*ժ-ով՝ 17%-ով:



	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
2022	507,121	377,755	395,881	527,025	531,577	649,383	675,698	651,185	638,567	579,798	484,860	513,541
2023	540,366	542,001	556,952	560,906	614,263	658,420	686,157	706,229	651,791	553,270	520,592	485,236
2024	482,904	482,540	515,678	510,006	508,139	0	0	0	0	0	0	0

Խոշոր պոմպակայանների էլեկտրաէներգիայի խափանումներ

Հաշվետու ժամանակահատվածում 67 խոշոր պոմպակայաններում էլ. մատակարման խափանումներն օպերատիվ կերպով շտկվել են, իսկ առաջացած թերությունները՝ հայտնաբերվել և վերացվել:

Երևան քաղաքի՝ «Վեոլիա Ջուր» ՓԲԸ կողմից սպառած էլեկտրաէներգիան

2024թ. մայիս ամսին Երևան քաղաքի ջրարտադրության պոմպակայաններում էլ. էներգիայի ծախսը նվազել է 424 882 կՎտ/ժամ (18,22%)՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:

Երևան քաղաքի ջրարտադրության պոմպակայանների սպառած էլեկտրաէներգիա



	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր
2022	1110.0	947.1	950.6	1324.0	1552.0	4093.0	4995.0	4767.0	3055.0	1579.0	1001.0	871.0
2023	1090.0	1107.0	1188.0	1310.0	2331.0	3903.0	5168.0	5379.0	3010.0	1441.0	1247.0	1212.0
2024	1,097	1,079	1,222	1,528	1,906							

Ջրարտադրության պոմպակայաններում (մարզեր) էլ. էներգիայի ծախսը նվազել է 162 600 ԿՎտ/ժ/ամիս կամ 8,13 %՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:

Մարզերի ջրարտադրության պոմպակայանների սպառած էլեկտրաէներգիա



	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր
2022	2,200.00	1,768.40	1,810.60	1,811.30	1,862.40	2,171.90	2,952.70	3,133.90	2,454.50	1,944.80	1,636.40	1,708.00
2023	1,820.60	1,698.50	1,789.10	1,669.80	2,000.30	2,360.90	2,868.60	3,163.80	2,485.60	2,096.50	1,862.20	1,860.20
2024	1,850.40	1,688.50	1,796.50	1,977.60	1,837.70							

«Վեոլիա Ջուր» ՓԲԸ կողմից սպառած էլ. էներգիան

- Ընդհանուր էլ. էներգիայի ծախսը նվազել է 624420 ԿՎտ/ժամ 11,27%՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:

«Վեոլիա Ջուր» ՓԲԸ կողմից սպառած էլեկտրաէներգիան



3.3. ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Ստորև աղյուսակում ներկայացնում են մայիս ամսվա ընթացքում աշխարհագրական տեղեկատվական համակարգում կատարված աշխատանքները.

Աշխատանքի անվանում	Չ/Մ	Քանակ
Ֆիզիկական և իրավաբանական բաժանորդների տեղի ուղղում	հատ	4343
Ֆիզիկական և իրավաբանական բաժանորդների զրոյացում՝ տեղադիրքը ամբողջությամբ սխալ լինելու պատճառով	հատ	7234
Կետերի տեղադիրքի ուղղում «ԱՏՀ» բազայում առկա տեղեկատվության և տեսուչների կողմից կատարված նկարների տեղադիրքի հիման վրա	հատ	67000
14000 կետեր տեղադրվել են փողոցների միջնակետերում՝ «ԱՏՀ» բազայի փողոցների անվանումների համընկման և վարչատարածքային միավորների համընկման դեպքում	կետեր	14000
Մոտ 30.000 կետեր, տեղադրվել են վարչատարածքային միավորների, ինչպես նաև լոգգեր գոտիների տարածքում	կետեր	30000
Կատարողական նախագծերի հիման վրա կատարվել է Երևան քաղաքի և մարզերի մի շարք համայնքների ջրագծերի թարմացում	թարմացում	1
Կատարվել է SCADA համակարգում առկա կետային տեղեկատվություն տեղորոշում և համապատասխանեցում «ԱՏՀ» բազային	թարմացում	1
Կատարվել է ՃԿՓ-ների, հոսքաչափերի տվյալների բազայի թարմացում	թարմացում	1
Ջրագծերի (1271 մ) և կոյուղագծերի (2403 մ) թվայնացում, թարմացում և ուղղում	թվայնացում	1
Թվայնացվել են՝ կառուցված ջրագծեր (291.1մ), կառուցված կոյուղագծեր (47մ), փոխարինված/տեղադրված փական, ՃԿՓ, հիդրանտ, օդահեռ, պոմպ 11 հատ:	թվայնացում	1
ՀՀ բոլոր 44 քաղաքների հիդրավլիկ մոդելների կառուցում երկարաժամկետ ժամանակի համար	քաղաք	44
171 տեխնիկական պայմանների թվայնացում (253 բաժանորդ)	Տեխ պայման	171
Տեխնիկական պայմանների դիմումների վերաբերյալ դիմորդի տարածքի տեղադիրքի թվայնացում, կազմվում է քարտեզ՝ տարածքում առկա կոմունիկացիաներով: 222 գործի թվայնացում՝ 362 բաժանորդ	բաժանորդ	362
«ԱՏՀ»-ում առկա Երևան քաղաքի ընդհանուր կոյուղու երկարությունը կազմում է 1854 կմ	կմ	1855
ԱՏՀ»-ում առկա մարզային կոյուղու երկարությունը կազմում է 1860 կմ	կմ	1863
«ԱՏՀ»-ում առկա Երևան քաղաքի ջրագծերի և ջրատարների երկարությունը կազմում է 2814 կմ, մարզային ջրագծերի և ջրատարների երկարությունը կազմում է 9625 կմ	Կոյուղի և ջրագծեր	2814 9625

3.4. ՋՐԱՏԱՐ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

Հաշվետու ամսվա ընթացքում կատարվել են հետևյալ աշխատանքները.

- Ծաղկաձորի Թեղենիս աղբյուներից եկող ջրատարի վրա գտնվող մարիչ հորից արտահոսում էր 15լ/վ ջրաքանակ: Կարգավորումներ կատարելուց հետո ամբողջ ջրաքանակը մտավ քաղաք, որի արդյունքում ունեցանք Մաքրավան պոմպակայանում Ծաղկաձորի ուղղությամբ պոմպի աշխատանքի ժամերի նվազում:

- Արարատյան պոմպակայանի №3 կոլեկտորի վրա առաջացել էր վթար մոտ 50լ/վ մեծությամբ: Կազմակերպվեց ջրատարի կանգառ և վթարը վերացվեց «Ջրառ» ծառայության աշխատակիցների կողմից:

- Շրջայցի ժամանակ հայտնաբերվել են վթարներ Արին-Բերդ Խարբերդ 2լ/վ և 5լ/վ մեծությամբ, ինչպես նաև Արին-Բերդ Միս կոմբինատի տարածքում 8լ/վ մեծությամբ:

- Մաքրավան-Աբովյան ջրատարի շրջայցի ժամանակ հայտնաբերվեցին վթարներ Կարենիս գյուղի տարածքում 2լ/վ մեծությամբ և Կոտայք գյուղի միացման մոտ 2լ/վ մեծությամբ:

Հաշվետու ամսվա ընթացքում կատարվել են նաև ջրաքանակների չափումներ և կարգավորումներ:

3.5 ՔԼՈՐԻ ԵՎ ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՄԱՔՐՄԱՆ ԿԱՅԱՆՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Ընթացիկ ամսում «Ջրառ» ծառայության կողմից իրականացվել են հետևյալ աշխատանքները.



- Քաղաք Իջևան, «Ազատամուտի» քլորակայանում հիպոքլորիդի հաբի սարքավորման անխափան աշխատանքն ապահովելու նպատակով հիպոքլորիդի հաբի համակարգի շարքից դուրս եկած լողանային տվիչը փոխարինվել է նոր լողանային տվիչով:

- «Բուժական» քլորակայանում հիպոքլորիդի հաբի համակարգի շարքից դուրս եկած դոզավորման պոմպի մեմբրանը փոխարինվել է նորով:

- Քաղաք Սիսիան, «Բռնակոթ» քլորակայանում հեղուկ քլորի համակարգի խափանված ջրի պոմպը փոխարինվել է նոր պոմպով հեղուկ քլորի համակարգի անխափան աշխատանքն ապահովելու համար:

■ Քաղաք Երևան, «Զորաղբյուր» քլորակայանում հեղուկ քլորի համակարգի անխափան աշխատանքն ապահովելու նպատակով փոխարինվել է հեղուկ քլորի համակարգի բաժանարար հանգույցի վրայի ալլդոս փականի կցամասը:

■ Քաղաք Սպիտակ, «Չախկալ» քլորակայանում հեղուկ քլորի համակարգի անխափան աշխատանքն ապահովելու նպատակով հեղուկ քլորի համակարգի խափանված վակուում կարգավորիչը փոխարինվել է՝ վերանորոգված վակուում կարգավորիչով:

3.6 1-85 ԹԵԺ ԳԻԾ



■ Հաշվետու ամսվա ընթացքում 1-85 հեռախոսակենտրոնում գրանցվել է 48822 հեռախոսազանգ:

■ Առևտրային բնույթի զանգերի քանակը կազմել է 12795 զանգ, որից Երևան քաղաքինը եղել է 10042 զանգ (78,5%), իսկ մարզերի ցուցանիշը՝ 2753 զանգ (21,5%):

■ Շահագործման բնույթի զանգերի քանակը կազմել է 36027 զանգ, որից Երևան քաղաքինը՝ 27295 զանգ (75,8%), իսկ մարզերինը՝ 8732 զանգ (24,2%):

■ 2024թ. մայիս ամսվա համեմատ՝ 2024թ մայիս ամսին 0,23%-ով նվազել է առևտրային զանգերի քանակը, իսկ շահագործման զանգերի քանակն ավելացել է 7,37%-ով:

■ 2023թ. մայիսի համեմատ՝ 2024թ մայիս ամսին 5%-ով նվազել է 5 րոպեից ավել զանգերի քանակը և 2%-ով ավելացել է հայտարարությունների լսումս ավտոմատ ծառայության միջոցով:

Ջրամատակարարման գրաֆիկի բողոքներ

■ 2023թ. մայիսի համեմատ՝2024թ. մայիս ամսին 0,9%-ով նվազել է ջրամատակարարման զանգերի քանակը:

■ 2023թ. մայիսի համեմատ՝ 2024թ մայիս ամսին ավելացել է հետզանգով սպասարկված զանգերի քանակը 3%: 2023թ. մայիս ամսին կատարվել է 26722 հետզանգ, իսկ հաշվետու ամսվա ընթացքում՝ 27622 հետզանգ:

185 հեռախոսային կանչերի օրական հաշվառման հաշվեգիր

	Ստորաբաժանում	2023 Մայիս	2024 Մայիս	%
Առևտրային	Ընդամենը	**12825**	**12795**	-0.23%
	Երևան	9688	10042	3.65%
	Մարզեր	3137	2753	-12.24%
Շահագործում	Շահագործում	33555	36027	7.37%
	Երևան	26656	27295	2.40%
	Արաբկիր	6147	6625	7.78%
	Քանաքեռ-Զեյթուն	2172	1963	-9.62%
	Մաշտոց	3422	3414	-0.23%
	Շահումյան	3449	2344	-32.04%
	Շենգավիթ	2686	3908	45.50%
	Կենտրոն	4440	3049	-31.33%
	Հյուսիս/Ավան Նոր Նորք/	2214	4117	85.95%
	Էրեբունի	2126	1875	-11.81%
	այդ թվում կոյուղու վթար	218	222	1.83%
	այդ թվում դիտահորի խցանում	4690	5522	17.74%
	ՄԱՐԶԵՐ	6899	8732	26.57%
	Հարավ	3475	5271	51.68%
	Հյուսիս	3424	3461	1.08%
	այդ թվում կոյուղու վթար	42	535	1173.81%
	այդ թվում դիտահորի խցանում	2452	2898	18.19%
Ընդամենը		**46380**	**48822**	5.27%

ԼՐԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Հաշվետու մայիս ամսվա վերջին օրերը արտակարգ էին ոչ միայն Վեոլիաթիմի, այլ ողջ հանրապետության համար: Լոռու և Տավուշի մարզերում Դեբեդ և Աղստև գետերի վարարման հետևանքով մեծ ավերածություններ եղան ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերում: Ջրատարների ջրի տակ մնալու, վթարվելու, ջրերը պղտորվելու հետևանքով հենց առաջին րոպեներից բնակավայրերում անվտանգության նկատառումով դադարեցվեց ջրամատակարարումը: Այդ օրերին Հանրային կապերի ծառայությունը Վեոլիաթիմի մյուս աշխատակիցների հետ աշխատել է արտակարգ ռեժիմով՝ պարբերաբար տեղեկատվություն տվել մարզերում ընթացող աշխատանքների ընթացքի մասին: Առանձին-առանձին հրապարակումներ են եղել յուրաքանչյուր բնակավայրում ընթացող ջրատարների կառուցման, վթարավերացման և ջրամատակարարման վերականգնման օրվա ու ժամի մասին: Այս օրերին ՀԿԾ-ն.ընկերության ֆեյսբուքյան էջում ապահովել է 7 հրապարակում՝ տեղում արված լուսանկարներով և տեսանյութերով: Քանի որ աղետի մասշտաբները դեռևս անհաշվելի են և դեռ աշխատանքներ են ընթանում 2 մարզում էլ: Հանրային կապերի ծառայությունը ամենօրյա կապի մեջ է տնօրինությունների, շահագործման տեղամասերի հետ՝ խնդիրներին օպերատիվորեն անդրադառնալու համար:

Մայիս ամսվա լավ լուրն այն էր, որ գործարկվեց Ընկերության Տելեգրամյան բոտը, որին բաժանորդագրվելով՝ սպառողները կարող են ծանուցում ստանալ իրենց հասցեում սպասվող ջրանջատումների մասին: Հանրային կապերի ծառայությունը պատրաստեց Բոտի մասին հոլովակ, որտեղ սպառողներին քայլ առ քայլ բացատրվում է բաժանորդագրվելու ձևը: Հետո արդեն 9 հեռուստաալիքներով՝ հանրապետական և մարզային, 5 օր՝ օրական 2 անգամ հեռարձակվել է հոլովակը, ինչպես նաև.տեղադրվել է ընկերության պաշտոնական կայքում և ֆեյսբուքյան էջում:



Հաշվետու ամսին մեկնարկեց Ընկերության Պարտադիր կապտալ աշխատանքների 2024 թվականի ծրագիրը: ՀԿԾ-ն Ֆրի նյուզ հեռուստաընկերության հետ պատրաստել է 3 ռեպորտաժ՝ Լոռու մարզի՝ Ստեփանավան և Սպիտակ քաղաքներից, Արարատի մարզի Արարատ քաղաքից, Կոտայքի մարզի Ծաղկաձոր, Աբովյան քաղաքներից և Առինջ գյուղից: Ռեպորտաժներում քաղաք առ քաղաք, գյուղ առ գյուղ ներկայացվել է թե ինչ ծավալի շինարարական աշխատանքներ են ընթանում ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերում: Նաև նյութերը առանձին լուսանկարներով և տեսանյութերով տեղադրվել են ընկերության կայքում և ֆեյսբուքյան էջում:

Քիչ չէին նաև շահագործման տեղամասերի ուժերով ընթացող աշխատանքների.ծավալը: «Զոդ-Սուրենավան-Արմաշ-Երասխ» 16 կմ-ոց ջրատարի 2,6 կմ խիստ վթարային վիճակում գտնվող հատվածի վերանորոգման աշխատանքները լուսաբանվել է և Ֆրի նյուզ հեռուստաընկերության կողմից, և լուսանկարներով հրապարակվել Ընկերության ֆեյսբուքյան էջում: Կանոնավորվեց Եղվարդ քաղաքի Երևանյան թաղամասի ջրամատակարարումը, որի խնդիրը տարիների պատմություն ուներ: Լուսաբանվեց և մեծ տարածում ունեցավ նաև Եղվարդում ապօրինությունների հայտնաբերումը, որից տուժում էին հենց նույն բնակավայրի բնակիչները:

Ամռանն ընդառաջ Հանարյին կապերի ծառայությունը սեփական նախաձեռնությամբ սկսել է նկարահանումներ. վթարավերացման աշխատանքներից, որի նպատակն է սպառողներին ցույց տալ.թե ինչպես է ընթանում ամբողջ գործընթացը՝ 1-85-ում ահազանգի գրանցումից մինչև վթարի վերացումն ու ջրամատակարարման վերականգնումը: 5,32 րոպեանոց ֆիլմը ընկերության.ֆեյսբուքյան էջում արժանացել է հարյուրավոր հավանությունների:

Լուսաբանվեց նաև Ընկերությունում մեկշաբաթյա «Առողջության և անվտանգության առաջնորդություն» դասընթացը, որի ընթացքում փորձառու ուսուցանողը աշխատեց ընկերության ղեկավար անձնակազմի, ինչպես նաև առողջության և անվտանգության հարցերով զբաղվող մեր մասնագետների հետ:

Ամբողջ ամսվա ընթացքում Հանրային կապերի ծառայությունը ակտիվ կապ է պահպանել լրատվամիջոցների հետ՝ թե բանավոր, թե գրավոր արձագանքելով նրանց ահազանգերին:

Մայիս ամսին ֆեյսբուք սոցիալական ցանցի միջոցով նշվել է աշխատանքի և աշխատավորի միջազգային օրը, ինչպես նաև տեղեկատվական հրապարակումներ են եղել Բաժանորդների սպասարկման գրասենյակների աշխատաժամերի մասին: Շատ են եղել հրապարակումներ.ընկերության կարիքների համար պահանջվող ծառայությունների կամ ապրանքների մատակարարման, վթարային ու պլանային ջրանջատումների մասին:

ՈՐԱԿԻ, ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ

5.1. ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ/ՍԵՄԻՆԱՐՆԵՐ

Հաշվետու ամսում տեղի ունեցավ «Առողջության և անվտանգության առաջնորդության» եռօրյա տեսական և պրակտիկ դասընթաց՝ Ընկերության ղեկավար անձնակազմի թվով 5 և անվտանգության անձնակազմի թվով 5 աշխատողի համար, որը վարում էր Վեոլիա Գրուպի կողմից հրավիրված դասընթացավար՝ «NEW HSE» ընկերության գլխավոր տնօրեն Ժաննետ Արշիմովան:
Դասընթացը միտված էր Ընկերությունում առողջությանը և անվտանգությանն ուղղված ռիսկերի կանխարգելմանը, կառավարմանը, անվտանգության մասով գիտելիքների ամրապնդմանը և շարունակական բարելավմանը, աշխատողների շրջանում Անվտանգության դերի բարձրացմանը, Ընկերության համակարգում անվտանգ աշխատանքի մշակույթի ձևավորմանը և այդ մշակույթը ընկերության կառուցվածքային բոլոր ստորաբաժանումների ղեկավարների, աշխատողների, ժամանակավոր աշխատողների և գործընկերների շրջանում տարածմանը:
Ընկերության առաջնահերթությունը ամենակարևոր ռեսուրսի՝ մարդու կյանքի և առողջության պահպանումն է և այդ առնչությամբ Ընկերության ղեկավար անձնակազմի նպատակն է չունենալ աշխատողների շրջանում աշխատունակության կորստով վնասվածքներ, մահվան և մասնագիտական հիվանդությունների դեպքեր և բոլոր այսպիսի դեպքերը, ինչպես նաև վերջիններիս հանգեցնող ռիսկերը, դասընթացի արդյունքում ստացած գիտելիքների, համատեղ թիմային աշխատանքի, աչալրջության և պրոֆեսիոնալիզմի արդյունքում արդյունավետ կառավարել և կանխարգելել:

ՈԱԱ Բաժինը, հիմք ընդունելով «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի, ՀՀ Աշխատանքային օրենսգրքի 247-րդ հոդվածի, ինչպես նաև ՀՀ կառավարության 21/04/2011 թվականի N 529-Ն որոշմամբ սահմանված «Քլորի արտադրության, օգտագործման, պահման և փոխադրման ժամանակ անվտանգության տեխնիկական կանոնակարգի» պահանջները, ինչպես նաև Վեոլիա Գրուպի «Աշխատանքներ փակ տարածքում» բարձր ռիսկերի կառավարման ստանդարտի և «Կյանքը փրկող կանոններ»-ի (LRS) պահանջները Ընկերության Տեխնիկական տնօրինության թվով 77 աշխատողի համար կազմակերպեց և իրականացրեց ստորև ներկայացվող 4 մոդուլից բաղկացած առկա դասընթացները և գիտելիքների ստուգումը.

- «Քլորակայաններ շահագործող, սպասարկող անձնակազմի մասնագիտական որակավորում»,
- «Առաջին օգնություն ցուցաբերելու եղանակները» թեմայով դասընթաց,
- Վեոլիա Գրուպի «Աշխատանքներ փակ տարածքում» ԲՌԿ ստանդարտի պահանջները,
- Վեոլիա Գրուպի «Կյանքը փրկող կանոնները»:

ՈԱԱ բաժինը (ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ), ղեկավարվելով Ընկերության Գլխավոր տնօրենի 2022 թվականի հունվարի 24-ի թիվ 02Լ հրամանի և հրամանին կից կարգի պահանջներով, ՀՀ Աշխատանքային օրենսգրքի 88-րդ հոդվածի և 254-րդ հոդվածի պահանջներով, Վեոլիա Գրուպի «Կյանքը փրկող կանոններ»-ի (LRS) պահանջներով, Ընկերության Տեխնիկական տնօրինության թվով 8 աշխատողի համար կազմակերպեց և իրականացրեց ստորև ներկայացվող 3 մոդուլից բաղկացած առկա դասընթացները և գիտելիքների ստուգումը.

- «1000կգ և ավել բեռնաբարձությամբ ավտոկռանների վարորդների որակավորման»,
- «Առաջին օգնություն ցուցաբերելու եղանակները» թեմայով դասընթաց,
- Վեոլիա Գրուպի «Կյանքը փրկող կանոնները»:

Հաշվետու ամսում բաժնի պետը և մեկ աշխատակից մասնակցեցին Գրուպի կողմից զակմակերպված «EWC-ի շրջանակներում աշխատանքի առողջության և անվտանգության վերաբերյալ համատեղ բանաձևեր» և «ՄՌ և ԱԱ ԿԱԵ գոտու առաջնորդության դասընթաց» առցանց դասընթաց/սեմինարներին:

2023-2024թթ. կազմակերպված դասընթացներին/հրահանգավորումներին մասնակցած աշխատակիցների քանակների համեմատական գրաֆիկ



2023-2024թթ. կազմակերպված դասընթացներին/հրահանգավորումների ժամային համեմատական գրաֆիկ



5.2. ՌԻՍԿԵՐԻ ՀԱՅՏՆԱԲԵՐՈՒՄ/ՄԵՂՄԱՅՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄ

- Բաժնի անվտանգության պատասխանատուներն իրականացրեցին անվտանգության ստուգայցեր Ընկերության թվով 11 քլորակայանում և 7 պոմպակայանում: Ստուգայցերի նպատակն էր իրականացնել ռիսկերի գնահատում և կառուցվածքները շահագործող անձնակազմերի կողմից Ընկերությունում հաստատված անվտանգության հրահանգների պահանջների կատարման որակի մոնիթորինգ:
- ՈԱԱ Բաժնի կողմից ուսումնասիրվել են Ընկերության ջրամատակարարման և ջրահեռացման ցանցերում իրականացվող թվով 57 վթարավերականգնողական աշխատանքների ընթացքում տեղամասերի վթարավերականգնողական աշխատանքային խմբերի կողմից անվտանգության հրահանգների պահանջների կատարման որակը, տեղում տրվել են ցուցումներ անվտանգության գործընթացի արդյունավետ կազմակերպման՝ մասնավորապես ԱՊՄ-ների կիրառման, մշակվող խրամուղիների պարագծով գծանշման, ծանր տեխնիկայի շահագործման ուղղությամբ, ինչպես նաև արձանագրված թերությունների վերաբերյալ կազմվեցին հաշվետվություններ և ներկայացվեցին Ընկերության համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներին՝ արձանագրված թերությունների շտկման նպատակով:

2024 թ. իրականացված անվտանգության ստուգայցերի քանակներն ըստ օբյեկտների



5.3 ՎԵՌԼԻԱ ԳՐՈՒՊԻ ԲՌԿ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԻ ԻՆՔՆԱԳՆԱՀԱՏՄԱՆ, ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՆԵՐԴՐՄԱՆ, ՆՈՐ ԲՌԿ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԻ ՀԱՅԵՐԵՆ ԼԵԶՎՈՎ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԴԱՊՏԱՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

- Հաշվետու ամսում ավարտվել են Վեռլիա Գրուպի կողմից մշակված «Կրակային աշխատանքներ» Նոր խմբագրության Բարձր Ռիսկերի կառավարման ստանդարտի հայերեն լեզվով թարգմանության և ադապտացման աշխատանքները:

5.4. ԱՊՄ-ՆԵՐԻ ԵՎ ԿՊՄ-ՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ԵՎ ԲԱՇԽՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

- ԱՊՄ-ների և ԿՊՄ-ների ձեռքբերման գործընթացը շարունակական է և այդ առնչությամբ պարբերաբար իրականացվում են կարիքների գնահատում և անհրաժեշտ քանակների ձեռքբերում:

«ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ» ՓԲԸ
ՀՀ, 0014, ք.Երևան, Ն.Ադոնցի 6/1
ՀՀ, 0025, ք.Երևան, Աբովյան 66ա
E-mail: info@vjur.am